Հայտարարվում է մրցույթ Արմավիրի մարզի «Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N12 հիմնական դպրոց» ՊՈԱԿ–ի աշխարհագրություն (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքներն և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին :

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում՝ (Ձև 1),
2. մեկ լուսանկար (3 x4) չափի,
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ՝ (դիպլոմ),
4. անձը հաստատող փաստաթուղթ,
5. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
6. ինքնակենսագրություն (Ձև 5),
7. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ,
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /առկայության դեպքում/,
10. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ :

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք :

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 21-ից մինչև սեպտեմբերի 3-ը ներառյալ, ամեն օր ժամը 10.00-ից մինչև 15.00-ը, բացի շաբաթ և կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից :

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 5-ին, ժամը՝ 14:00, ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N 12 հիմնական դպրոցում. հասցեն՝ քաղաք Էջմիածին Արագած զանգված 18:

Տեղեկությունների համար զանգահարել (77)85-31-10 հեռախոսահամարով :